ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 02/23

27.06.2023թ. ք. Երևան

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի՝ այնքանով, որքանով վարչական դատարանին լիազորություն է տրամադրում կասեցնելու օրինական ուժի մեջ մտած վճռի կատարումը, Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված դիմումի առնչությամբ

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/3590/02/17 քաղաքացիական գործով 17.09.2019թ. կայացված վճռով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի (Այսուհետ նաև՝ Բանկ) հայցն ընդդեմ Սուսաննա Հակոբյանի, Կարեն Մնացականյանի, Գոռ Մնացականյանի, Հռիփսիմե Մնացականյանի, Նենսի Մնացականյանի, Ստեֆանի Մնացականյանի՝ Բանկին պատկանող՝ Երևան քաղաքի Այգեստան 9-րդ փողոցի, թիվ 39/10 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքից վտարելու, գույքը սեփականատիրոջը հանձնելու մասին բավարարվել է:

Վճռի հարկադիր կատարումն ապահովելու համար Բանկի դիմումի հիման վրա դեռևս 10.09.2020թ. կատարողական թերթ է ուղարկել ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայություն: Մինչ օրս օրինական ուժի մեջ մտած վճիռը չի կատարվել՝ հարկադիր կատարողի որոշումները վարչական դատարանում վիճարկելու և դրանց կատարումը վարչական դատարանի կողմից կասեցնելու պատճառով:

ՀՀ վարչական դատարանի /այսուհետ նաև՝ Դատարան/ վարույթում է գտնվում թիվ ՎԴ/2935/05/22 վարչական գործն ըստ Սուսաննա Հակոբյանի հայցի ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ բնակարանը հարկադիր վտարելու մասին 17.12.2020 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի 19.05.2022թ. որոշմամբ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲ ընկերությունը նշված գործում ներգրավվել է որպես երրորդ անձ:

Դատարանի նույն որոշմամբ մերժվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ներկայացված Հայցվորի միջնորդությունը՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին: Նշված որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը վարույթ է ընդունվել ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանի 13.06.2022թ. որոշմամբ:

Վերաքննիչ վարչական դատարանի 19.07.2022թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է և կայացվել է նոր դատական ակտ, որով Սուսաննա Հակոբյանի, Գոռ, Կարեն, Հռիփսիմե, Նենսի և Ստեֆանի Մնացականյանների ներկայացուցիչ Լարիսա Բաղդասարյանի միջնորդությունը բավարարվել է՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության «Բնակարանը հարկադիր վտարելու մասին» 17.12.2020 թ. որոշման կատարումը մինչև սույն գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը կասեցվել է:

Նշված որոշման դեմ Բանկի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունելը մերժվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի 07.12.2022թ. որոշմամբ:

2. ԴԻՄՈՒՄՈՎ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴՐՈՒՅԹԸ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)) 83-րդ հոդվածի համաձայն՝

1. Վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ՝ ...

3) այն դեպքերի, երբ վիճարկվում է կատարողական վարույթի ընթացքում հարկադիր կատարողի կողմից կայացված վարչական ակտ.

*2. Հայցվորի միջնորդությամբ վարչական դատարանը կարող է գործի քննության ժամանակ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, **3-րդ**, 4-րդ, 4.1-ին, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել վարչական ակտի կատարումը:*

Դիմումատուի փաստարկները հիմնականում հանգում են նրան, որ վերջնական դարձած վճիռները պետք է հնարավորինս արագ կատարվեն: Այն բխում է *res judicata* սկզբունքից: Բացի այդ, Դիմումատուն որպես իր դիմումի հիմնավորում նշում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման փուլը, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, ներառվում է արդար դատաքննության իրավունքի շրջանակներում և դրանց ոչ պատշաճ և ժամանակին կատարումը կարող է խնդիրներ առաջացնել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի ինչպես 6-րդ հոդվածի,

այնպես էլ Կոնվենցիային կից 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի (սեփականության պաշտպանություն) տեանկյունից:

Ամփոփելով՝ Դիմումատուն Սահմանադրական դատարանից խնդրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասը, այնքանով, որ վարչական դատարանին լիազորություն է տրամադրում կասեցնել օրինական ուժի մեջ մտած վճռի կատարումը ճանաչել ՀՀ սահմանադրության 60-րդ, 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

3. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Անդրադառնալով դիմումում բարձրացված իրավական հարցին՝ նշենք, որ դեռևս 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԴՈ-780 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է, որ «իրավական պետությունում, որպես կանոն, անթույլատրելի է ցանկացած դատական սխալի առկայության հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայումը: Դրանով իմաստազրկվում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու գաղափարը, որի էությունն այդ ակտերին հնարավոր կայունություն հաղորդելու և դրանց անփոփոխելիության հանդեպ դատավարության կողմերի վստահությունը պաշտպանելու մեջ է»:

Մեկ այլ՝ 2008 թվականի մայիսի 27-ի ՍԴՈ-754 որոշմամբ Սահմանադրական դատարանը շեշտել է, որ՝ «Միջազգային իրավունքում հայտնի սկզբունքը՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (res judicata), ամրագրված է ինչպես միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների՝ քրեական և քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը որպես իրավական որոշակիության արդյունք ենթակա է հարգանքի»:

Մյուս կողմից՝ զարգացնելով դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման վերաբերյալ իր դիրքորոշումները, Սահմանադրական դատարանը 2011 թվականի հուլիսի 15-ի ՍԴՈ-984 որոշման մեջ վկայակոչել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորած իրավակիրառ պրակտիկան, համաձայն որի՝ «....իրավական որոշակիության պահանջները բացարձակ չեն: Այս սկզբունքից շեղումն արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհաղթահարելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ իրավունքի գերակայության բաղադրատարրերից է իրավական որոշակիության սկզբունքը, որն իր հերթին ենթադրում է res judicata սկզբունքի հարգում: Վերջինս էլ նշանակում է, որ որևէ կողմ իրավասու չէ պահանջել վերջնական և կատարման ենթակա վճռի վերանայում պարզապես գործը կրկին քննելու և վեճը նորից լուծելու նպատակով: Գործը վերանայելու՝ վերադաս դատարանի իրավասությունը պետք է իրականացվի դատական սխալները և արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները շտկելու, այլ ոչ թե նոր քննություն սկսելու նպատակով: Վերջնական և կատարման ենթակա դատական ակտի վիճարկումը թույլատրելի է միայն էական և անհետաձգելի հանգամանքների դեպքում (տես, մասնավորապես, Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով 2003 թ. հուլիսի 24-ի վճիռը, պարբ. 52):

Վերոնշյալ իրավական դիրքորոշումները համադրելով սույն դիմումի փաստական հանգամանքների հետ՝ կարող ենք փաստել, որ խնդրո առարկա գործում կարծես առկա են վճիռների վերջնական լինելու սկզբունքից (res judicata) շեղվելու և թիվ ԵԿԴ/3590/02/17 քաղաքացիական գործով 17.09.2019թ. կայացված վճռի հարկադիր կատարումը կասեցնելու ծանրակշիռ հիմքեր: Մասնավորապես, դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ *գործով Սուսաննա Հակոբյանի, Գոռ, Կարեն, Հռիփսիմե, Նենսի և Ստեֆանի Մնացականյանների ներկայացուցիչ Լարիսա Բաղդասարյանը հայցադիմումով ներկայացրել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ բնակարանը հարկադիր վտարելու մասին 17.12.2020թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջ, միաժամանակ միջնորդել է կասեցնել Ծառայության 17.12.2020թ. Երևան քաղաքի Այգեստան 9-րդ փողոց, թիվ 39/10 հասցեի բնակարանի հարկադիր վտարելու մասին որոշման կատարումը, պատճառաբանելով, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ԿԴ/0641/02/17 քաղաքացիական գործն ըստ հայցի Սուսաննա Հակոբյանի ընդդեմ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի, «Ագաթա-Ֆարմ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հարութ Ղարիբյանի, երրորդ անձինք նոտար Նոնա Գասպարյան, ՀՀ ԿԱ ԱԳԿ Պետական կոմիտե ք. Երևան, Այգեստան 9 փողոց 39 հասցեի անշարժ գույքը 19.12.2016թ. վաճառելու վերաբերյալ աճուրդը, հիշյալ անշարժ գույքի վերաբերյալ կնքված ք. Երևան, Այգեստան 9-րդ փողոցի 39/10 հասցեի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, իսկ աճուրդի անվավեր ճանաչումը հանգեցնելու է կատարողական վարույթով ներկայացված կատարողական թերթով հայցվող կատարողական գործողությունների սպառմանը: Առկա է կատարողական գործողությունների անհնարինության հիմք, իսկ*

ներկայումս պատասխանողի 17.12.2020/21 թվականի «Բնակարանի հարկադիր վտարման մասին» որոշման կատարման պայմաններում հայցվորներին զգալի վնաս կպատճառվի և անհնարին կդարձվի հայցվորի իրավունքի պաշտպանությունը, քանի որ հայցվորի սույն գործով հայցվող պահանջն ըստ էության կսպառվի հաշվի առնելով, որ առկա է ոչ գույքային բնույթի կատարողական գործողությունների կատարման անհնարինություն: Այլ կերպ ասած վարչական ակտի կատարումը չկասեցնելու պայմաններում պատասխանողին վտարման գործողություններ կատարելը չարգելելու դեպքում սույն հայցը կդառնա առարկայազուրկ, քանի որ եթե հետագայում պայմանականորեն հայցվորի պահանջը բավարարվի վտարումն արդեն իսկ իրականացված կլինի: Բացի այդ, հայցվորը կկրի անհամաչափ կերպով զգալի վնաս՝ հաշվի առնելով նաև որ յուրաքանչյուր դատավարության մասնակից ունի օրինական ուժի մեջ մտած դատական ակտին վստահելու իրավունք և օրինական ակնկալիք, որ այն պարտադիր կերպով ենթակա է կատարման ՀՀ ողջ տարածքում և պարտադիր է բոլորի համար, որը սակայն պատասխանողի կողմից չի ապահովվում (տես՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի թիվ ՎԴ/2935/05/22 գործով 2022 թվականի հուլիսի 19-ի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը, էջ 7):

Ինչպես տեսնում ենք, վարչական դատարանի կողմից արդեն իսկ ուժի մեջ մտած վճռի առնչությամբ հարկադիր կատարողի կայացրած որոշման դեմ բերված վիճարկման հայցով կասեցվել են կատարողական գործողությունները, ինչը հանգեցրել է խնդրո առարկա վճռի կատարման առկախմանը: Միևնույն ժամանակ վիճարկվող իրավադրույթի՝ ՀՀ վարչական դատավարության 83-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը պետք է դիտարկել արդարադատության շահի պաշտպանության տիրույթում: Այսինքն, բոլոր այն դեպքերում, երբ ողջամտորեն անհրաժեշտություն կա շեղվելու դատական ակտերի վերջնական լինելու կարևոր սկզբունքից՝ օրենսդիրը նման **բացառիկ լիազորություն** է վերապահել վարչական դատարանին՝ հայցվորի միջնորդությամբ գործի քննության ժամանակ Վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, **3-րդ**, 4-րդ, 4.1-ին, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել վարչական ակտի կատարումը: Այլ կերպ ասած՝ դա պետք է լինի **խիստ անհրաժեշտության դեպքում՝** հաշվի առնելով էական և անհետաձգելի հանգամանքների առկայությունը:

Միանգամայն հասկանալի է, որ օրենսդիրը նման լիազորությունը դատարանին վերապահել է մրցակցող երկու մասնավոր շահերի հավասարակշռման նպատակով՝ մինչև գործով վերջնական որոշման կայացումը: Այլ կերպ ասած՝ օրինական ուժի մեջ մտած վճիռների արագ և պատշաճ կատարումը կանոն է, իսկ դրանից եզակի հանգամանքների առկայությամբ պայմանավորված շեղումը՝ բացառություն:

Միևնույն ժամանակ գտնում ենք, որ արդարադատության շահով պայմանավորված տեղին կլիներ, որ դատավարական օրենսդրությամբ կարգավորումներ նախատեսվեին արագացված դատաքննության համար բոլոր այն դեպքերում, երբ առկա է արդեն իսկ ուժի մեջ մտած վճիռ, որի կատարումն առկախվել է մեկ այլ վարույթով արդեն իսկ ուժի մեջ մտած դատական ակտի հիմքում դրված գործարքի անվավերությունը վիճարկելու արդյունքում: Առաջարկի կարևորությունը և հրատապությունն էլ ավելի է ընդգծվում ներպետական դատարանների գերծանրաբեռնվածության պայմաններում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ **Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:**

Համակարգող՝ ***Ա.Ասատրյան***